

ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՆԱԽԱՏԻՊՈՎ ՀԱՆԳՍՏԻ ԿԱՑԱՐԱՆԻ ՏԻՊԱՅԻՆ
ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՀԱՅՅՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Շուշան Գևորգի Վարդանյան, Անահիտ Խաչատուրի Պետրոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*Shushan.vardanyan 01@gmail.com

Ներկայացված են պատմական Հայաստանի տարածքում ազգային բնակելի տների միջավայրի կազմավորման հորինվածքային առանձնահատկությունների, գործառական գոտիավորման և ոճաբանական ձևավորման սկզբունքների կիրառմամբ մոդուլային կացարանների նախագծման նախադրյալները: Նպատակը և խնդիրներն են հայկական ժողովրդական տների ծագման և կազմավորման տիպաբանական վերլուծությամբ լիարժեք բացահայտել դրա բաղկացուցիչ տարրերի բովանդակությունը, կոնստրուկտիվ առանձնահատկությունները և կիրառել մոդուլային սկզբունքով նախագծվող կացարանների ձևագոյացման մեթոդը: Դիտարկվում են մոդուլային հիմքով ազգային տարրերով բնակելի կացարանների շինարարության տնտեսական շահավետությունը, ռեսուրսախնայողությունը, կառուցման արագությունը և էկոլոգիապես մաքուր հումքի կիրառումը, ինչը նպաստավոր նախադրյալներ է ստեղծում դրանց տարածման և զարգացման գործում: Ներկայացվում են հարմարավետ ազգային տարրերով մոդուլային կացարաններ, որոնք կիրառելի են ինչպես ազգային էկոտուրիզմի խթանման նպատակով, այնպես էլ հիմնական բնակության համար:


Բանալի բառեր. բնակելի, ազգային, գլխատուն, կացարան, մոդուլ, կոնստրուկցիա, տնտեսող, հարմարավետ, գեղեցիկ

Ներածություն

Հայկական ազգային բնակելի տների հատակագծային ձևերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց չափերը, տան ենթամասերի գոտիավորումը բխել են ընտանիքի հիմնական զբաղմունքից և նրանց կենցաղային սովորություններից, այլ կերպ ասած՝ նրանց կեցությունից: Տան կոնստրուկտիվ ձևն ու հանգույցները լուծվել են՝ ելնելով տեղական շինանյութերի հնարավորություններից և բնակլիմայական պայմաններից [1]: Տան բոլոր տարրերն առաջացել են ոչ թե պատահականորեն, այլ հստակ ֆունկցիայի համար, դրանք բոլորը խիստ պատճառաբանված են և տրամաբանորեն կապված միմյանց հետ: Բացակայում են ճարտարապետական ավելորդությունները, շքեղության և անիմաստ ձևերի միտումը: Ազգային կացարանների ինտերիերը ձևավորվել է բազմաթիվ գործոնների շնորհիվ: Դա, առաջին հերթին, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակն է, այդ թվում՝ տարբեր շրջանների և գոտիների բնակչության

տնտեսական կենսակերպի առանձնահատկությունը, ինչն իր արտացոլումն է գտել, մասնավորապես, տնտեսական շինությունների քանակի ու չափերի, գործառույթների, ձևերի և նախագծման մեջ [2]: Հարկ է ընդգծել, որ հայկական ավանդական կացարանի ինտերիերի կազմակերպման բնորոշ առանձնահատկություններից է դրա տնտեսական և բնակելի մասերի համակցումը [3]: Ուսումնասիրելով հայկական բարձրավանդակի բնակարանաշինությունը, ակնհայտ է դառնում ժողովրդական տների ձևաստեղծման և դասակարգման սկզբունքներն իրենց ճարտարապետական տարրերով: Նմանատիպ ճարտարապետական տարրերից կարելի է առանձնացնել սրահը՝ իր կենտրոնական օջախով, որն ամփոփված է երդիկավոր տանիքով: Երդիկի առավել տարածված օրինակներից հարկ է նշել հազարաշենը, որն իր անվանումը ստացել է՝ ելնելով կառուցման ձևից [4]: Առանձնացնելով ազգային բնակելի տների համար վերոնշյալ առանձնահատկությունները, ճարտարապետական և ինտերիերի մաս կազմող տարրերը՝ փորձարկեց առաջարկվող հայեցակարգային մոդուլային կացարաններում կիրառել դրանց նախագծման սկզբունքները:

Ներկայումս բնակելի կացարանների նախագծման արդիական մեթոդ են դարձել մոդուլային տեսակի կոնստրուկցիաները (նկ. 1): Փորձ է արվել համադրել հայկական բնակելի ժողովրդական տան կերպարը մոդուլային կոնստրուկցիաներով իրականացված ծավալով: Մոդուլային կացարանները՝ մոդուլային տներն արտադրվում են մեծ մասերով (բլոկներով) գործարանում հոսքագծի վրա, պատուհաններով և դռներով, բոլոր ներքին ինժեներական հաղորդակցողիներով: Հոսքագծերով արտադրությունը զգալիորեն նվազեցնում է մոդուլային կառույցների (բլոկների) արժեքը: Գործարանում մոդուլները հավաքելուց հետո դրանք տեղափոխվում են շինհրապարակ, որտեղ նախ պետք է տեղադրվեն կառույցների հիմքերը [5]: Նման կառույցների հիմքը չի կրում մեծ բեռ և, հետևաբար, չի պահանջում մեծ խորություն: Մոդուլային շենքերի պատերի ջերմատեխնիկական հաշվարկն իրականացվում է՝ հաշվի առնելով տարածքի կլիմայական պայմանները: Մոդուլային կառույցների տանիքը ձևավորվում է թեթև կառուցվածքային տարրերից (տախտակ, ծալքավոր մետաղական սալիկներ): Մոդուլային հիմքով հավաքվող տների հիմնական առավելությունը, իհարկե, շինարարության արագությունն է, որը կախված չէ տարվա եղանակից: Հայաստանի լեռնային պայմաններում պատրաստի հավաքվող տները մի քանի անգամ կարող են հեշտացնել շինարարության գործընթացը: Նման կերպ հյուրատնային կացարանների արտադրությունը և տեղակայումը մարզերի և համայնքների անհասանելի կամ դժվար հասանաելի բնության տարածքներում կարող է դառնալ իրատեսական՝ այդպիսով նախադրյալներ ստեղծելով էկոտուրիզմի զարգացման հեռանկարում: Մոդուլային կացարանների բոլոր վերոնշյալ առավելությունները, դրանց ճկուն կառուցվածքը և մշակված մեխանիզմները հնարավորություն են տալիս դրանք կիրառելի դարձնել տարբեր հատակագծային լուծումների մշակման դեպքերում:



Նկ. 1 Մոդուլային կազմարանների առավելությունները

Նյութեր և մեթոդներ

Ուսումնասիրության նյութն է պատմական Հայաստանի տարածքում Հայկական բնակելի տունը: Կացարանների տեսակի, կառուցվածքի և ինտերիերի վրա մեծ ազդեցություն են ունեցել տվյալ հասարակության մեջ տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, քաղաքական պայմանները, տնտեսության ուղղվածությունը, սոցիալական տարբերակվածության աստիճանը, ընտանիքի ձևերը, կրոնական համոզմունքները և էթնոմշակութային կապը հարևան ժողովուրդների հետ [6, 7]: Մեծ ուշադրություն էր դարձվում հիմնական կացարանի՝ տան և հյուրասենյակների (գոմի օդա և հյուրասենյակ) ինտերիերի դեկորատիվ և կառուցվածքային տարրերին: Հարդարման հիմնական առարկաներն էին պատերը, հատակը, սյուներն ու առաստաղները: Ինտերիերը զարդարելու հիմնական միջոցը զարդանախշն էր, որն օգտագործվում էր, մասնավորապես, շենքերի այն տարրերի վրա, որոնք առանց դրա անհրապույր տեսք կունենային: Սովորաբար պատերը եղել են անմշակ, ջարդված կամ կիսատաշ քարերից, առանց ծեփի, կամ ծղոտի հետ խառնված կավով սվաղված: Պատերի միապաղաղությունը մեղմում էր դրանց մեջ մեծ և հատկապես փոքր չափերի պահարանների առկայությունը (փորագրված «դռներով» և առանց դրա), որոնք հաճախ հարթ սրբատաշ քարերով էին շրջանակված: Բազմազանություն էին մտցնում նաև պատերի մեջ խրված փոքրիկ ճաղավանդակները, որոնց վրա մաղեր, գդալների տուփեր, չոր պղպեղի կապոցներ էին կախված, ինչպես նաև դնում էին լամպեր: Գորգերն ու կարպետները, փոված հատակին կամ պատերից կախված (հատուկ դեպքերում), ինտերիերին գունեղ տեսք էին հաղորդում [8, 9]:


Հետազոտության մեթոդը հիմնվում է ժամանակագրական հետևողականությամբ պատմական, տեսական և նախատիպային չափանիշների ուսումնասիրման, համեմատական վերլուծության վրա [10]:

Արդյունքներ և քննարկում

Ներկայացվում է ժողովրդական տների մերօրյա կիրառման արդիականությունը՝ Հայաստանում ազգային էկոլոգոսաշրջության զարգացման նպատակով [11]:

Առաջարկվում է ներկայումս և ապագայում ազգային կերպարով արդի պահանջները բավարարող բնակելի կացարանի մոդուլ: Ուսումնասիրության նորարարությունը՝ դա մոդուլային կոնստրուկցիայի, ֆունկցիոնալության, և հայկական ազգային բնակելի տան ծավալատարածական ձևի, կերպարի համատեղման փորձն է: Դիտարկվում են ազգային բնակելի տների ինտերիերի բաղկացուցիչ տարրերը, դեկորատիվ կիրառական տարրերը, կահավորանքի բնորոշ չկրկնվող տեսակները, ազգային ինքնատիպ կերպարն ընդգծող մեթոդները, ծավալատարածական և հատակագծային հորինվածքի մակարդակում ազգային տան ձևավորման յուրօրինակ լուծումները:

Գոյություն ունեցող նախատիպերը վերլուծելիս, որոշելով որակապես կարևոր այն հատկությունները, որոնցով պետք է օժտված լինի այդպիսի առարկան, այս ուսումնասիրությունը ներկայացնում է բնակելի համալիրի նոր մոդել ժամանակավոր բնակության համար (նկ. 2, 3, 4):



**Նկ. 2. Մոդուլ 1, 4 անձ.
ա - հատակագիծ, բ - առաստաղի
հատակագիծ**




**Նկ. 3. Մոդուլ 2, 6 անձ.
հատակագիծ**




**Նկ. 4. Մոդուլ 3, 10 անձ.
հատակագիծ**

Առաջարկվող մոդուլային կացարանը հայեցակարգային և տեսական մակարդակում պետք է համապատասխանի այնպիսի չափանիշների, ինչպիսիք են.

- սոցիալ-հոգեբանական կյանքի հարմարավետություն: Հոգեբանական անվտանգությունը կենսունակության հիմքն է, ամենակարևոր պայմանն անձի լիարժեք զարգացման, նրա հոգեկան առողջության պահպանման և ամրապնդման համար,
- բնապահպանական բարեկեցություն: Համալիրի տեղակայումը հիմնականում էկոլոգիապես անվտանգ տարածքներում: Որպես նյութ էկոլոգիապես մաքուր հումքի օգտագործում, որը պետք է օժտված լինի ջերմամեկուսիչ, խոնավակայուն, ջրամեկուսիչ հատկություններով: Մոդուլի պատերը գործարանային արտադրության են: Երեսապատման համար նախատեսված են մետաղական ծակոտկեն պանելներ, փայտ: Տանիքը ջերմակայուն և ջրամեկուսիչ նյութով փշված է ներսից: Հաջորդ մոդուլները միացվում են մետաղական ելուստ-անկյունակների միջոցով: Մոդուլային բլոկ պատերը իրար են միանում մետաղական ելուստներով, բաղկացած են մի քանի շերտերից՝ արտաքին հարդարում, ջրամեկուսացում, ջերմամեկուսացում՝ հանքային բամբակով, գոլորշիների արգելք, ներքին հարդարում: Բլոկների հատակները նույնպես բազմաշերտ են, այդ թվում՝ արտաքին ծածկույթ, ջրամեկուսացում, ջերմամեկուսացում, գոլորշիների արգելք, ենթահարկ, վերին շերտ,
- նոր տեխնոլոգիաների և նյութերի օգտագործմամբ սերիական արտադրություն: Կառույցի շինարարություն հնարավորինս սեղմ ժամկետներում (նկ. 5, 6),



Նկ. 5 Մոդուլ 1, 4 անձ.
 ա - տրոհված մոդուլային հանգույցներով, բ - բնակելի բջիջների համարակալված մոդուլային պատ հանգույցները




Նկ. 6. Բնակելի բջիջի մոդուլային տարածական հանգույցները

- *հարմարվողականությունը տեղանքի ռելիեֆին:*

Հայեցակարգային գլխավոր մոդուլի նախագծման հիմքում ընկած են ազգային բնակելի տների հատակագծման սկզբունքները, մասնավորապես, մեկ բաժնով տների օրինակով սրահն՝ իր կենտրոնական օջախով (գլխատնով), որն ամփոփված է երդիկավոր տանիքով՝ հազարաշենով: Մեկ բաժնով տների գլխավոր առանձնահատկություններից էր նաև տարբեր գործառույթների համատեղումը մեկ սենյակում, ինչը սահմանափակ մակերեսի պայմաններում լավագույն լուծումն է (նկ. 2):

Շնորհիվ իր կոնստրուկտիվ առանձնահատկությունների, մոդուլների նման համակարգը թույլ է տալիս կատարել վերահատակագծում ըստ անհրաժեշտության: Բնակության համար առաջարկվող առաջին գլխավոր մոդուլը նախագծված է 4 անձի լիարժեք բնակության համար: Մոդուլի բնակելի մակերեսը 22 մ² է, որտեղ տեղակայվում են մեկ ննջարան՝ երկհարկանի մահճակալով, հյուրասենյակ և միացված խոհանոց, լոգասենյակ: Հյուրասենյակի բազմոցը, շնորհիվ ձևափոխման, կարող է վերածվել մահճակալի՝ ստեղծելով լրացուցիչ մահճակալային երկու տեղ (նկ. 7): Այստեղ մեկ սենյակում են տեղակայվում խոհանոցը, հյուրասենյակային գոտին և նաև շնորհիվ ձևափոխման՝ ննջարանը: Որպես գլխատան կարևոր և բաղկացուցիչ մաս հանդիսանում էր օջախը, վերևում գմբեթաձև զարգացող հազարաշենով (նկ. 8): Որպես մոդուլի տիպիկ հայկական բնորոշող գիծ ընդունված է հենց այդ գաղափարը, սակայն տարածքի և մակերեսի օպտիմալ օգտագործման նպատակով՝ գլխատունը շեղված է կենտրոնից և տեղակայված է անկյունային հատվածում [12]:



Նկ. 7. Հյուրասենյակի տրանսֆորմացվող սխեման

Լինելով մոդուլային, արագ հավաքվող կացարան, այս մոդուլը նախատեսվում է տեղակայել հայկական լեռնաշխարհի բարդ ռելիեֆային գոտիներում, մարդկանցից կտրված վայրի բնության գրկում՝ այդպիսով զարգացնելով էկո-զբոսաշրջությունը: Ուստի կարևոր էր ազգային տարրերը ընդգծելուց գատ շեշտադրել հայկական լեռնաշխարհի բնությունը և հնարավորության տալ ունենալ գեղեցիկ, տեսարժան տեսարաններ մոդուլի ցանկացած անկյունից: Մոդուլն ունի մեծ համայնապատկերային պատուհաններ՝ տեղակայված հենց հյուրասենյակ-ննջասենյակի մոտ, նաև նախատեսված է բաց պատշգամբ՝ Հայաստանի գեղատեսիլ բնությունը տեսանելի դարձնելու միտումով:



Նկ. 8. Հյուրասենյակ

Մոդուլի ընդհանուր 25 մ² մակերեսում տեղավորված են ժամանակավոր կացության և հանգստի համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները, պահպանված են բոլոր երգոնոմիկ պահանջները:

Հյուրասենյակի տարածքում տարբեր գործառույթների համախմբումը ենթադրում է ձևափոխվող կահույքի և ինտերիերի տարրերի նախագծում: Բազմոցը տեղակայվում է մոդուլի հիմքում առաձևացված ակոսի մեջ: Հայկական տներում նման հնարքն օգտագործում էին ջերմության պահպանման և օջախին մոտ լինելու նպատակով: Քանի որ մոդուլն ունի 600 լ/ժ հաստությամբ հիմք, այդ մակերեսն առավել նպատակային օգտագործելու համար դրա մեջ առանձնացված են նկուղային պահոցներ: Նաև շնորհիվ նման կոնստրուկտիվ լուծման հնարավոր է դառնում բազմոցի մահճակալի դետալը թաքցնել հիմքի մեջ և անհրաժեշտության դեպքում այն առաջ քաշել և փակել բազմոցի քառակուսի բացվածքը (նկ. 7):

Մակերեսի խնայողության համար ճաշասեղանի փոխարեն նախատեսված է օգտագործել ձևափոխվող լրագրասեղանը, որը, շնորհիվ մետաղական գլանաձև հիմքի, կարող է փոխել իր բարձրությունը և մեծացնել մակերեսը: Հաջորդ ձևափոխումը պայմանավորված է կենսաբուխարու տեղաշարժմամբ: Կենսաբուխարին կախվում է մետաղական լարերով երդիկից, անհրաժեշտության դեպքում այն իջեցվում է սեղանի մակարդակին կամ բարձրացվում մինչև երդիկի բացվածք: Այսպիսով հնարավորություն է ստեղծվում մի քանի գործառույթներ համախմբել:

Երկրորդ մոդուլի կցումը հնարավորություն է տալիս ավելացնել մահճակալային տեղերի քանակը: Այն նախատեսված է լրացուցիչ 4 անձի բնակության համար: Մոդուլն ունի երկու ննջասենյակ, մեկ լոգասենյակ, միջանցք: Մոդուլի մակերեսը կրկին 25 լ² է, առաստաղի ընդհանուր բարձրությունը՝ 2500 լ/ժ, հազարաշենի ամենաբարձր կետում 0 նիշից՝ 3300 լ/ժ: Հազարաշենի ծածկն այս մոդուլում տեղակայվում է երկտեղանի մահճակալով ննջասենյակում: Ննջարանը հյուրասենյակի նման ունի մեծ համայնապատկերային շարժական պատուհաններ՝ տեսարանների ապահովման նպատակով: Երկրորդ մոդուլի կցման դեպքում այն հանդիսանում է որպես գլխավոր ննջասենյակ՝ հյուրասենյակում տեղակայվելու փոխարեն: Երկրորդ ննջասենյակում տեղադրվում է երկհարկանի մահճակալ՝ առաջին մոդուլի նմանությամբ: Երկու մոդուլը կարող է սպասարկել 6 անձի բնակության համար անհրաժեշտ պայմանները: Ընդ որում, առանց գլխավոր մոդուլի մյուս մոդուլները չեն կարող կենսագործել, քանի որ խոհանոցը և ճաշասենյակային գոտիներ մյուս մոդուլներում բացակայում են (նկ. 3):

Երրորդ մոդուլն իրենից ներկայացնում է ննջասենյակային բլոկ, կարող է սպասարկել 8 անձի հանգիստ: Ինտերիերը տիպային է, մոդուլներում կրկնվում են միննույն հատակածածկի նյութը, պատերի երեսապատման նյութերը, կահույքը: Քանի որ հանգստացողների քանակը երրորդ մոդուլի հետ հասնում է 8-ի, ուստի անհրաժեշտություն կար առանձին ավելացնել ճաշասեղան և աթոռներ, արդյունքում առաջին մոդուլում ննջասենյակը փոխարինվում է ճաշասենյակով (նկ. 4): Հազարաշենն այս մոդուլում ևս տեղակայվում է գլխավոր ննջասենյակում, կրկնելով նախորդ մոդուլի հատակագծումը: Երեք մոդուլները միասին կազմում են 75 լ² տարածք: Արտաքինից մոդուլը երեսապատված է մետաղական և փայտային պանելներով: Փայտային պանելները փորագրված են հայկական զարդանախշերով: Զարդանախշերի գեղեցկությունն ընդգծելու և



Նկ. 9. Մոդուլների տեղակայումը կտրվածքով

շեշտելու նպատակով դրանք լուսավորվում են Led լուսավորության սարքերով: Մոդուլը, կախված իր տեղակայման աշխարհագրական դիրքից, ունենալու է տվյալ տարածաշրջանին բնորոշ զարդանախշերով փայտային պանելներ: Զարդանախշերն ինտերիերում հանդիպում են պատուհանների դիմաց տեղադրված դեկորատիվ միջնորմերի տեսքով,

որոնք բացի դեկորատիվ նշանակությունից, ունեն նաև արևից պաշտպանելու կարևոր ֆունկցիա: Շնորհիվ լույս ու ստվերի հետաքրքիր խաղի՝ այդ միջնորմերից ընկնող ստվերները հետաքրքիր հայկական միջավայր են ստեղծում, ողողելով տունը հայկական յուրահատուկ և խորհրդավոր շնչով (նկ. 8):

Արտաքինից իր թեք տանիքով մոդուլը նույնպես հիշեցնում է հին հայկական տների կերպարը: Հազարաշենի առկայությունը բնակելի տներում ուներ իր ֆունկցիոնալ նշանակությունը, այն իր կարևոր ֆունկցիոնալ դերն է կատարում նաև այս մոդուլի ծավալատարածական հորինվածքում: Շնորհիվ զմբեթաձև տանիքի, որը թեք հարթակներով փակվում է արտաքինից, հնարավորություն է ստեղծվում այդ թեքությամբ տեղադրել արևային պանելներ՝ մոդուլի ինքնաբավ աշխատանքն ապահովելու համար: Նաև պետք է ընդգծել, որ տանիքի թեքության մեջ հնարավոր է թաքցնել ջրի համար նախատեսված տարան, որը նաև անձրևաջրերի վերամշակման ֆիլտրերի միջոցով կարող է լրացուցիչ ոռոգման ջրի աղբյուր ստեղծել: Շնորհիվ կենտրոնական գլանաձև հիմքի, որի վրա ձգվելու է մոդուլը, հնարավոր է դառնում անարգել անցկացնել բոլոր ջրատար և ջրահեռացման խողովակները մեկ տեղով (նկ. 9):



Նկ. 10. Հյուրասենյակ, խոհանոց



Նկ.11. Մոդուլ 1. տեղակայված

Հաշվի առնելով հայկական լեռնաշխարհի բազմազանությունը՝ մոդուլային կացարանների առանձնակի մշակած կոնստրուկցիաները հնարավորություն են տալիս դրանք տեղակայել ինչպես հարթավայրային, այնպես էլ լեռնային և ջրային հատվածներում: Հստակ հատակագծով

մշակված ինտերիերը թույլ է տալիս իրար կցել տարբեր մոդուլներ և ստանալ բազմանդամ ընտանիքների, մեծ խմբով հանգստացող զբոսաշրջիկների պահանջները բավարարող կացարաններ:

Շարժական, կոնստրուկտիվ տեսանկյունից անկախ և ինքնաբավ, հարմարավետ բնակելի բջջի ստեղծման գաղափարը չի կարելի համարել պատահական կամ անցողիկ: Այն պայմանավորված է միայն շինարարական կոնստրուկցիաների, ժամանակակից տեխնոլոգիաների, նոր թեթև և ամուր նյութերի ստեղծմամբ (նկ. 10, 11):

Եզրակացություն

Հաշվի առնելով, որ Հայաստանը ներկայումս կայանում է որպես զբոսաշրջային երկիր, մյուս կողմից համաշխարհային միտումը դեպի անհատական փոքրիկ բնակելի բջջիջներում կեցություն կազմակերպելը, մոդուլային կացարանների հետզհետե աճող ֆունկցիոնալ և նպատակային առավելությունները տվյալ հայեցակարգային առաջարկով հնարավոր է խթանել հայկական տուրիզմի զարգացումը, փորձել շրջանառության մեջ դնել ու նպաստել հայկական մշակույթի տարածմանը:

Հայեցակարգային առաջարկով փորձ է արվում նորովի մեկնաբանել պատմական հայկական բնակելի տների ինտերիերը և այն համադրել արդի նյութերի և տեխնոլոգիաների հետ, ընդգծել հայկական բնակելի տների ծավալատարածական և հատակագծային լուծումները, դարձնել այն հանրաճանաչելի հասարակության լայն զանգվածներին: Տարեցտարի աճող ներքին և էկո-զբոսաշրջության զարգացման պայմաններում կարևոր դեր ունեն հյուրատների արդիակա-նացումը և ժամանակակից նորարական տեխնոլոգիաների կիրառումը դրանց նախագծման հիմքում: Մոդուլային տներն իրենց տեսակով, տեխնոլոգիաներով, կիրառվող նյութերով, կոնստրուկտիվ առանձնահատկություններով հրաշալի լուծում են Հայաստանում վերոհիշյալ արդիական հյուրատնային կացարաններ կառուցելու համար: Զբոսաշրջության համար գրավչություն ապահովող գործոններից է ազգային էթնիկ տարրերի, ավանդույթների, ճարտարապետության և դեկորատիվ կիրառական տարրերի կիրառությունը, ուստի ազգային բնակելի տների կերպարայնության կիրարկումը հանգստի կացարանների նախագծման հիմքում կարևոր նպատակ է հետապնդում:

Առաջարկվող հայեցակարգային մոդուլները լուծում են առաջադրված նախագծային բոլոր խնդիրները և նպատակները: Ուսումնասիրելով և վերլուծելով հին հայկական ազգային բնակելի տների ճարտարապետությունը և ինտերիերը, հնարավոր եղավ առանձնացնել կարևոր առանցքային նշանակության կոնստրուկտիվ և դեկորատիվ տարրերը, կիրառել և մեկնաբանել դրանք նորովի, դարձնել ժամանակակից միջավայրում ներդաշնակ ինտեգրվող մաս և նախագծել արդի ինքնաբավ գործող բջիջ:

Գրականության ցանկ

- [1] Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն. Երևան, 1992, 187 էջ:
- [2] Դ. Քերթմենչյան, Վան քաղաքի պատմաճարտարապետական ժառանգությունը. Երևան, 2012, 39 էջ:
- [3] Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն. Երևան, 1959, 10 էջ:
- [4] Է. Հակոբյան, Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը. Երևան, 1964, 22 էջ:
- [5] Инновация в строительстве жилья – модульные дома.
<https://yellowhome.ru/2018/05/03/innovaciya-v-stroitelstve-zhilya-modulnye-doma/>
- [6] Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, 12 էջ:
- [7] А. Марутян, Интерьер армянского народного жилища (вторая половина XIX - начало XX вв.). Ереван, 1984, 65 с.
- [8] В.Л. Глазычев, Зарождение зодчества. Стройиздат, Москва, 1984. 126 с.
- [9] П.И. Боржовский, Древнейшее прошлое человечества. Наука, Москва, 1980. 240 с.
- [10] А.Л. Оппенгейм, Древняя Месопотамия. Портрет погибшей цивилизации. Наука, Москва, 1980, 408 с.
- [11] А. Тарасенок, Виды экологического туризма, Москва, 2010, 170 с.
- [12] <https://www.armgeo.am/ru/armenian-hazarashen/>

КОНЦЕПТУАЛЬНОЕ ПРЕДЛОЖЕНИЕ ТИПОВЫХ МОДУЛЕЙ ЖИЛЬЯ ДЛЯ ОТДЫХА С ПРОТОТИПОМ НАЦИОНАЛЬНЫХ ЖИЛЫХ ДОМОВ

Шушан Геворговна Варданян*, Анаит Хачатуровна Петросян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*Shushan.vardanyan 01@gmail.com

Представлены предпосылки проектирования модульных жилищ с применением композиционных особенностей формирования среды национальных жилых домов на территории исторической Армении, принципов функционального зонирования и стилистического оформления. Задачи и цель - посредством типологического анализа происхождения и формирования армянских народных домов полностью раскрыть содержание составляющих их элементов, конструктивных особенностей и применить их при формообразовании домов, проектируемых по модульному принципу. Рассматриваются экономическая выгода, ресурсосбережение, скорость строительства и применение экологически чистого сырья для строительства жилых домов с национальными элементами на модульной основе, что создает благоприятные предпосылки для их распространения и развития. Представлены модульные апартаменты с удобными национальными элементами, которые применимы как для продвижения национального экотуризма, так и для основного проживания.

Ключевые слова: жилой, национальный, притвор, жилье, модуль, конструкция, экономичный, удобный, красивый

CONCEPTUAL PROPOSAL OF TYPICAL HOUSING MODULES FOR RECREATION WITH A PROTOTYPE OF NATIONAL RESIDENTIAL BUILDINGS

Shushan Vardanyan*, Anahit Petrosyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**Shushan.vardanyan01@gmail.com*

The prerequisites for the design of modular dwellings using the compositional features of the formation of the environment of national residential houses in the territory of historical Armenia, the principles of functional zoning and stylistic design are presented. Tasks and purpose through a typological analysis of the origin and formation of Armenian folk houses, to reveal fully the content of their constituent elements, constructive features and to apply them as a basis for the design of housing according to the modular principle. It is considered the economic profitability, resource saving, speed of construction and the use of environmentally friendly raw materials for the construction of residential buildings with national elements on a modular basis. This creates favorable conditions for their distribution and development. It is presented modular dwellings with comfortable national elements, which are applicable both for the promotion of national, eco-tourism, and for the main residence.

Keywords: residential, national, vestibule, dwelling, module, construction, economical, comfortable, beautiful

Վարդանյան Շուշան Գևորգի (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի սաբիոն, մագիստրանտ, (+374)93726248, *Shushan.vardanyan01@gmail.com*, **Պետրոսյան Անահիտ Խաչատուրի, Ճ.թ., դոցենտ** (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի սաբիոն, (+374)93357849, *an_arch@mail.ru*

Варданян Шушан Геворговна (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Дизайна интерьера и экстерьера, магистрант, (+374) 93726248, *Shushan.vardanyan01@gmail.com*, **Петросян Анаит Хачатуровна, канд.арх., доцент** (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Дизайна интерьера и экстерьера, (+374)93357849, *an_arch@mail.ru*

Vardanyan Shushan (RA, Yerevan) – NUACA, department of Design Interior and Exterior, master student, (+374)93726248, *Shushan.vardanyan01@gmail.com*, **Petrosyan Anahit doctor of Philosophy (Ph.D) in Architecture, Associate Professor** (RA, Yerevan) – NUACA, department of Design Interior and Exterior, (+374)93357849, *an_arch@mail.ru*

Ներկայացվել է՝ 05.05.2023թ.

Գրախոսվել է՝ 26.05.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.08.2023թ.